



JOHN SAMPLE  
 1234 SAMPLE STREET  
 ADDRESS 2  
 ANYTOWN CA 90000

XX/XX/XXXX

## Կարևոր տեղեկություն

Փոխվում է այն ձևը, որով Դուք «Medi-Cal»-ի ծառայություններ եք ստանում: Որպեսզի Դուք «Medi-Cal»-ի ծառայություններ ստանաք, Դուք պետք է անդամագրվեք «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման որևէ առողջապահական ծրագրի: Այս փոփոխության նպատակը «Medi-Cal»-ի Ձեր ծառայություններն ի մի հավաքելն է:

Խնդրում ենք ուշադրությամբ կարդալ այս ծանուցումը: Ձեզանից դեռ ոչինչ անել չի պահանջվում: Մոտ մեկ ամսից մենք Ձեզ լրացուցիչ տեղեկություններ և առողջապահական ծրագրերին անդամագրվելու մասին նյութեր կուղարկենք: Եթե Դուք «Medicare»-ում եք, ապա այս փոփոխությունը չի ազդում «Medicare»-ի Ձեր ապահովագրության կամ «Medicare»-ի Ձեր բժշկին այցելելու կարողության վրա:

### Ի՞նչ ծառայություններ եք Դուք ստանալու «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրից:

«Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կհամակարգի «Medi-Cal»-ի կողմից վճարվող Ձեր ստացած բոլոր ծառայությունները:

- Եթե Դուք «Medicare»-ում եք, ապա «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կվճարի «Medicare»-ով նախատեսված որոշ ծախսերի բաժինը, որոշ լրացուցիչ նպաստներ (օրինակ՝ «Medicare»-ի կողմից չվճարվող դեղատոմսային դեղերի համար), որոշ դեպքերում՝ փոխադրման ծախսերը և որոշ «Long Term Services and Supports»-ների համար:
- Եթե Դուք միայն «Medi-Cal» ունեք, ապա «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրն ամբողջությամբ կվճարի Ձեր բուժսպասարկման համար, մասամբ՝ փոխադրման ծախսերը և որոշ «Long Term Services and Supports»-ների համար:

### Ի՞նչ են «Medi-Cal Long Term Services and Supports»-ները:

- «In-Home Supportive Services»-ները (IHSS) անձնական խնամքի ծառայություններ են այն անձանց համար, ում օգնություն է հարկավոր սեփական տանն ապահով ապրելու համար: Եթե այժմ Դուք IHSS եք ստանում, Դուք ստիպված չեք փոխել IHSS-ի Ձեր սպասարկողներին և կարող եք առաջվա նման վարձել, հեռացնել ու կառավարել Ձեր սպասարկողներին:
- «Community-Based Adult Services»-ը (CBAS) որոշ քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց խնամք, բուժում, ժամանց և սնունդ տրամադրող կենտրոններում գործող ցերեկային ծառայություններ են:

- «**Multipurpose Senior Services Program**»-ը (**MSSP**) սոցիալական և բուժսպասարկումը համակարգող ծառայություններ է տրամադրում՝ 65 տարեկան կամ ավելի մեծ անձանց համար: Եթե Դուք MSSP եք ստանում, ապա Ձեր առողջապահական ծրագիրը կհամագործակցի Ձեր MSSP-ի սպասարկողների հետ՝ Ձեր խնամքն ավելի լավ կազմակերպելու համար: Եթե այժմ Դուք MSSP եք ստանում, Դուք ստիպված չեք փոխել MSSP-ի Ձեր սպասարկողին:
- **Ծերանոցային խնամք:** Եթե Դուք ծերանոցում եք գտնվում, ապա Ձեր առողջապահական ծրագիրը կհամագործակցի Ձեր բժշկի և ծերանոցի հետ՝ Ձեր խնամքն ավելի լավ կազմակերպելու համար: Եթե այժմ Դուք ծերանոցում եք գտնվում, Դուք ստիպված չեք փոխել Ձեր ծերանոցը:
- Եթե այժմ Դուք այդ ծառայությունները չեք ստանում, Ձեր առողջապահական ծրագիրը կարող է հետագայում օգնել Ձեզ դրանք ստանալու հարցում, եթե Դուք դրանց կարիքն ունենաք:

**«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում ընդգրկվելուց հետո ես կարո՞ղ եմ այցելել «Medicare»-ի իմ բժիշկներին:**

Այո, եթե Դուք «Medicare» ունեք, «Medicare»-ի Ձեր սպասարկողները չեն փոխվի:

**«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում ընդգրկվելուց հետո ես կարո՞ղ եմ այցելել «Medi-Cal»-ի իմ բժիշկներին:**

Եթե Դուք միայն «Medi-Cal» ունեք, ապա անհրաժեշտ կլինի դիմել Ձեր առողջապահական ծրագրին և պարզել, թե արդյոք Ձեր սպասարկողներն աշխատակցում են այդ առողջապահական ծրագրին: Սովորաբար Դուք կարող եք 12 ամսվա ընթացքում այցելել Ձեր ներկա բժշկին:

«Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելը՝

- Չի փոխում «Medicare»-ի Ձեր ծառայությունները կամ նպաստները.
- Չի ազդում «Medi-Cal»-ի Ձեր իրավասության վրա և լրացուցիչ ծախս Չի պահանջում.
- Ձեզ Չի զրկում «Medi-Cal»-ի Ձեր որևէ ծառայությունից կամ նպաստից:

**Ես պե՞տք է անդամագրվեմ «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի:**

Դուք լրացուցիչ տեղեկություններ կստանաք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի ընտրության տարբերակների մասին: Եթե Դուք ընտրություն չկատարեք, MM/DD/YYYY -ից Ձեզ կընդգրկեն «Medi-Cal» որևէ առողջապահական ծրագրում:

**Այժմ ես ի՞նչ պետք է անեմ:**

- Ձեր տրամադրության տակ եղած ընտրության տարբերակների մասին խոսեք որևէ մեկի հետ, ով ծանոթ է Ձեր առողջական խնդիրներին, օրինակ՝ Ձեր ընտանիքի անդամների, բարեկամների, բժիշկների կամ «Long Term Services and Supports»-ի Ձեր տեղական սպասարկողների հետ:
- Ստուգեք Ձեր փոստարկը. մոտ մեկ անսից Դուք փաթեթ եք ստանալու «Health Care Options»-ից:

**Օգնության կամ լրացուցիչ տեղեկությունների համար**

Եթե այս նամակը Ձեզ անհրաժեշտ է որևէ այլ լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով, օրինակ՝ խոշորատառ տպագրությամբ, ձայնագրված կամ Բրայլի այբուբենով, կամ եթե Ձեզ օգնություն է հարկավոր որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելու հարցում, խնդրում ենք զանգահարել՝

**Health Care Options**

1-844-580-7272 • TTY: 1-800-430-7077

Երկուշաբթի - ուրբաթ՝ ժամը 8-ից 17-ը:

[www.HealthCareOptions.dhcs.ca.gov](http://www.HealthCareOptions.dhcs.ca.gov)